Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

https://www.improvetam.eu/

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

IMPROVET-AM

ՏԵՂԵԿԱՏՈՒ

N 1

Project 101128630

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

Ֆրանսիայում գործող «Ռոնի մասնագիտական կրթություն ընկերություն»-ը (SEPR), Իտալիայի Apro Formazione կենտրոնը, Հայաստանում գործող «Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն» հիմնադրամը (CEPFA), Գյումրու Պետական բժշկական քոլեջը և «Հովակիմյան լաբ» ատամնատեխնիկական լաբորատորիան միավորել են իրենց ուժերը Erasmus+ ծրագրի շրջանակներում՝ զարգացնելու մասնագիտական կրթությունն ու ուսուցումը: Ներկայիս IMPROVET-AM նախագիծը համահունչ է ԵՄ քաղաքականության՝ Արևելյան գործընկերության հատուկ ուղղության դրույթներին: Հայաստանում 2022 թվականի դեկտեմբերից ուժի մեջ մտած 2020-2030թթ. կրթության զարգացման ռազմավարությունը կարևորում է ՄԿՈՒ կրթական ծրագրերի վերանայումն ու արդիականացումը՝ դրանք աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցնելու համար: ԵՄ և ազգային նպատակների համատեքստում IMPROVET-AM ծրագիրը նախատեսում է.

- Հզորացնել և խթանել ՄԿՈՒ-ն Հայաստանում:
- Աջակցել Հայաստանում խնամքի և անձնական աջակցության, ինչպես նաև ատամնատեխնիկության ոլորտների զարգացմանը՝ բարելավելով մասնագիտական որակավորումը, ներդնելով թվային և կանաչ կրթություն:
- Ամրապնդել շահավետ համագործակցություն ՄԿՈՒ հաստատությունների և գործատուների միջև:
- Նպաստել հայ շրջանավարտների՝ աշխատաշուկա սահուն անցման, որի համար նախ և առաջ համապատասխանեցնել ՄԿՈՒ կրթական ծրագրերը գործատուների կարիքներին:
- Ապահովել մասնագետների շարունակական զարգացումը՝ ընդլայնելով նրանց հմտությունները:
- Հասանելի դարձնել շարունակական մասնագիտական կրթությունը կենտրոնական քաղաքների և հեռավոր գյուղական շրջաններում ապրող հայ սովորողների համար՝ ապահովելով նրանց ցկյանս ուսուցումը:
- Նպաստել մասնագիտական կողմնորոշման կարևորությանը հայ սովորողների, ընտանիքների և լայն հանրության համար:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Մեկնարկել է IMPROVET-AM-ի միջազգային հանդիպումը Լիոնում

Տեղեկատվական հանդիպում Երևանում

SEPR. Առաջավոր փորձի ներդրումը մասնագիտական կրթության մեջ

IIMPROVET-AM ծրագրի շրջանակներում մեկշաբաթյա ճանաչողական այց Հայաստան.

Գյումրու պետական բժշկական քոլեջի այցը ՍԵՊՖԱ:
Հաջողության ճանապարհին

Apro Formazione-ում փորձի փոխանակման ժամանակն է

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Մեկնարկել է IMPROVET-AM-ի միջազգային հանդիպումը Լիոնում

2024 թվականի հունվարի 17-18 Լիոնում մեկնարկեց Erasmus+ ծրագրի IMPROVET-AM նախագծի առաջին միջազգային հանդիպումը ծրագրի համակարգող SEPR ուսումնական հաստատությունում:

SEPR-ի, CEPFA-ի, Գյումրու պետական բժշկական քոլեջի, APRO Formazione-ի և «Հովակիմյան լաբ» լաբորատորիայի ներկայացուցիչները հավաքվել էին համագործակցելու և ծրագրի վերաբերյալ իրենց պատկերացումները կիսելու համար:

Հանդիպման կարևորագույն իրադարձությունները

Հանդիպման օրակարգի առանցքային կետերն էին.

- Կառավարման ռազմավարություն. ծրագրի արդյունավետ կառավարման և նախատեսված դրույթների լիարժեք իրականացում:
- Ատամնատեխնիկության և անձնական խնամքի ոլորտներում այդ գործունեությունն իրականացնող ընկերությունների կարիքների բացահայտում և Հայաստանի մասնագիտական կրթական ծրագրերի ուսումնասիրում:
- Մասնագիտական ուղղորդման և զբաղվածությունն ապահովող ծառայությունների վերլուծություն:
- Ծրագրի մասին տեղեկատվության արդյունավետ տարածման ռազմավարության մշակում:

Հանդիպման մեկնարկին ներկայացվեցին գործընկեր կազմակերպությունները, ծրագրի հիմնական նպատակները և աշխատանքային փաթեթները:

Հանդիպման զգալի մասը նվիրված էր Հայաստան կատարվելիք ճանաչողական այցի պլանավորմանը, որի նպատակն էր վեր հանել ընկերությունների կարիքները և հասկանալ հայկական ՄԿՈՒ կրթական ծրագրերի ներկա վիճակը ատամնատեխնիկության և առողջապահական խնամքի ու անձնական օգնության ոլորտներում: Այս կարևոր քայլը ճանապարհ կհարթի նշված ոլորտներում նախատեսվող վերապատրաստումների, ինչպես նաև նորարարական մոդուլների ստեղծման համար: Ի նպաստ այս ամենին՝ որոշ գործընկերներ նաև հնարավորություն ունեցան այցելել Լիոնում գտնվող ատամնատեխնիկական մոդելավորման լաբորատորիա, որի արդյունքում ավելի առարկայական դարձան արված քննարկումները:

Մեկ այլ կարևոր կետ էր Հայաստանում մասնագիտական ուղղորդման և աշխատանքի տեղավորման ծառայությունների ուսումնասիրությունը: Նպատակն էր սովորողներին և մեծահասակներին որակյալ մասնագիտական ուղղորդման ծառայություններ մատուցել՝ առաջարկելով քաղաքականություն և կանոնակարգ:

Երկօրյա հանդիպումը շատ արդյունավետ էր. գործընկերները հնարավորություն ունեցան մտքեր փոխանակել և պլանավորել ծրագրի հաջորդ փուլերը: Այս հանդիպման ձեռքբերումները ամուր հիմք են ծրագրի հետագա հաջողության համար:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

Տեղեկատվական հանդիպում Երևանում

Էրազմուս+ ծրագրի IMPROVET-AM նախագծի առաջին տեղեկատվական հանդիպումը մեկնարկել է 2024 թվականի մարտի 18-ին «Հոլիդեյ Ինն Երևան-Հանրապետության հրապարակ» հյուրանոցում:

Կարողությունների զարգացման այս ծրագրի բացման արարողության ժամանակ IMPROVET-AM-ի գործընկերները ներկայացրին ծրագրի տեսլականը, նպատակները և ակնկալվող արդյունքները: Միջոցառման ընթացքում հանդիսատեսին ներկայացվեց երեք տարվա միջազգային փոխանակումների և համագործակցությունների պլանավորումը: Բանախոսները խոսեցին նաև IMPROVET-AM-ի հիմնական ձեռքբերումների մասին, որոնց թվում են.

- ատամնատեխնիկության թվային գործիքներ,
- մասնագիտական ուղղորդման նոր մոտեցումներ,
- առողջապահական և խնամքի կրթական մոդուլներ:

Միջոցառման հյուրերի թվում էին Յան Պլեզինգերը՝ ԵՄ քաղաքական բաժնի ղեկավարը, Դավիթ Ավագյանը՝ Հայաստանում ԵՄ պատվիրակության ծրագրի ղեկավարը, Արաքսիա Սվաջյանը՝ ԿԳՄՍ փոխնախարարը, Ռուբեն Սարգսյանը՝ Աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարարը, Լանա Կարլովան՝ Էրազմուս+ հայաստանյան գրասենյակի համակարգողը, Եվրոպական կրթական հիմնադրամի (ETF), ՀՀ ԿԳՄՍ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունների այլ ներկայացուցիչներ:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

SEPR. Առաջավոր փորձի ներդրումը մասնագիտական կրթության մեջ

Ռոնի մասմագիտական կրթություն ընկերությունը՝ SEPR-ը, ստեղծվել է 1864 թվականին լիոնյան գործարար Ֆրանսուա Բարթելեմի Արլե-Դուֆուայի կողմից՝ Սեն-Սիմոնի գաղափարախոսությամբ ոգեշնչված: Նրա առաքելությունը միշտ եղել է համապարփակ ուսուցման ապահովումը տղամարդկանց և կանանց համար՝ խթանելով անհատների հավասարությունը, առաջավոր փորձի ներդրման ձգտումը՝ դրանով իսկ նպաստելով Ֆրանսիայում տնտեսական ու սոցիալական առաջընթացին:
Առաջնորդվելով առաջավոր փորձի ճկունության, ինքնատիպության և նորարարության սկզբունքներով՝ SEPR-ը հավատարիմ է մնացել ներառականությանը՝ առաջարկելով ցկյանս ուսուցման հնարավորություն բոլորի համար: Ուսումնական կենտրոնի հարուստ պատմությունը հիմնված է չորս սկզբունքների վրա՝ աշխարհիկ հասարակության ձևավորում, մարդասիրություն, հավասարություն և համընդհանուր շահ:
19-րդ դարից կարևորելով հմտությունների զարգացումը և կարողությունների հզորացումը՝ SEPR-ը ապահովում է մասնագիտական կրթություն երիտասարդների և մեծահասակների համար, ինչպես նաև խորհրդատվական ծառայություններ և կրթության գործընթացի նախագծում:
Այսօր SEPR-ն առաջարկում է ուսումնական ծրագրերի լայն ապարեզ և տարեկան կրթում է ավելի քան 5000 ուսանող վեց հիմնական ուղղություններով՝ արվեստ և դիզայն, հանրային սնունդ և հյուրանոցային գործ, տեսահաղորդակցություն և գրաֆիկա, գեղեցկության, առողջապահական և սոցիալական ծառայություններ, առևտուր և վաճառք, տեխնիկական և SS մասնագիտություններ:
SEPR-ն ապահովում է եվրոպական որակավորումների շրջանակի 2-7 մակարդակի կրթություն՝ երեք տարբեր ուղղություններով՝ աշկերտություն / դուալ կրթություն, առկա ուսուցման ձև և շարունակական ուսուցում:
SEPR-ը վարում է միջազգայնացմանն ուղղված ակտիվ քաղաքականություն, որը ներառում է ուսանողների շարժունակություն, գործընկերային կապեր, կարողությունների զարգացում և գերազանցության կենտրոնների ստեղծում:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

SEPR-ը աշխատում է հատուկ կարիք ունեցող սովորողների հետ՝ զարգացնելով սոցիալական և քաղաքացիական պատասխանատվությունը և աջակցելով ՄԿՈՒ ոլորտում ձեռնարկատիրության և գերազանցության զարգացմանը: Արդեն ավանդույթ է դարձել SEPR-ի համագործակցությունը ինչպես ցանցերի, այնպես էլ անհատների հետ և՛ երկրի ներսում, և՛ միջազգային հարթակում:
SEPR-ը և Հայաստանը. Ժառանգություն և տարիների համագործակցության պատմություն.
SEPR -ի համագործակցությունը Հայաստանի հետ սկսվել է 1994 թվականից, երբ Հայաստանի և Ֆրանսիայի սովորողներն ու դասախոսները փոխադարձ այցեր էին կատարում Լիոն և Երևան: Այս համագործակցությունը հանգեցրեց 2001 թվականին CEPFA-ի ստեղծմանը:
2022 թվականի մայիսից SEPR-ի և CEPFA-ի միջև համագործակցության նոր ուղղություններ են սահմանվել, այդ թվում.

- ՍԵՊՖԱ Կամպուսի ընդլայնում. նոր վերապատրաստման դասընթացներ և ուսանողների թվի կրկնապատկում:
- Նոր գործընկերների ձեռքբերում. մասնագիտական կրթության տարածում Երևանից դուրս դեպի Հայաստանի չորս հեռավոր մարզեր:

SEPR-ը, հավատարիմ մնալով ազնվության, միասնության և բաց լինելու իր սկզբունքներին, շարունակում է ուղղորդվել դրանցով իր բոլոր գործընկերային նախաձեռնություններում: Այս ջանքերի շնորհիվ SEPR-ը շարունակում է նպաստել մասնագիտական կրթության զարգացմանը և առաջավոր փորձի ու ներառականության մշակույթի ձևավորմանը:



For more information visit our website: http://www.sepr.edu

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

IMPROVET-AM ծրագրի շրջանակներում մեկշաբաթյա ճանաչողական այց Հայաստան.

2024 թվականի մարտի 16-23 IMPROVET-AM ծրագրի SEPR և APRO Formazione ընկերությունների եվրոպական գործընկերները ճանաչողական այցով ժամանել էին Հայաստան: Այս այցի նպատակն էր ուսումնասիրել Աշխատանքային փաթեթ 2-ը(WP2) և դրա շրջանակներում ստեղծել նորարարական վերապատրաստման մոդուլներ, ինչպես նաև Աշխատանքային փաթեթ 4-ը (WP4)՝ կարիերայի ուղղորդման համապարփակ շրջանակ մշակելու համար:

Հավատարիմ մնալով IMPROVET-AM-ի կանաչ մտածողության սկզբունքին՝ WP2-ին և WP4-ին վերաբերող այցերը իրականացվեցին միաժամանակ՝ նպաստելով ճանապարհորդությունների քանակի նվազեցմանը: Այցի առաքելությունը միտված էր բացահայտելու Հայաստանի գործատուների կարիքները և գնահատելու երկրի ՄԿՈՒ կրթական ծրագրերի ներկա վիճակը ատամնատեխնիկության և առողջապահական ու անձնական խնամքի ոլորտում: Նպատակն էր նախապատրաստական աշխատանք տանել վերապատրաստումների նորարարական մոդուլների ստեղծման համար և առաջարկներ անել մասնագիտական ուղղորդման և զբաղվածության ծառայությունների բարելավման քաղաքականության վերաբերյալ:

Այցի օրակարգը շատ հագեցած էր.

- Այցելություններ հիվանդանոցներ, ատամնաբուժարաններ, ընկերություններ և այլն:
- Ֆոկուս-խմբեր. քննարկումներ մասնավոր հատվածի/հիվանդանոցների, ՄԿՈՒ քաղաքականություն մշակողների և ծրագրի գործընկեր ՄԿՈՒ հաստատությունների հետ:
- Հարցազրույցներ Career Lab ՀԿ-ի և այլ համապատասխան կառույցների մասնակցությամբ:

Այցից առաջ՝ 2024 թվականի փետրվարին, հիմնական տեղեկատվություն հավաքագրելու նպատակով պատրաստվել և ուղարկվել էին հարցաթերթիկներ Հայաստանի մասնավոր հատվածին/հիվանդանոցներին, համապատասխան շահագրգիռ կողմերին և ՄԿՈՒ հաստատություններին, այդ թվում երկու հայկական գործընկեր ՄԿՈՒ հաստատություններից, ծրագրի գործընկեր Հովակիմյան Լաբ լաբորատորիային և ծրագրի ասոցացված գործընկերներ ԿԳՄՍ և Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություններին:

Հավաքագրված տեղեկատվությունը ամբողջացվել է Հայաստանում ճանաչողական այցի ընթացքում:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

2024 թվականի մարտի 18
Ֆոկուս-խմբային քննարկումներ շահագրգիռ կողմերի մասնակցությամբ:
րոնի ղեկավարի հետ հարցազրույցով:
2024 թվականի մարտի 19
Ֆոկուս-խմբային հանդիպում և այց CEPFA, որին հաջորդել են այցեր Երևանի ընկերություններ:

2024 թվականի մարտի 20
Ֆոկուս-խմբային քննարկումներ Գյումրու պետա-կան բժշկական քոլեջում, այդ թվում այցելություն-ներ ատամնատեխնիկական լաբորատորիաներ և խնամքի կենտրոններ:

2024 թվականի մարտի 21
Ֆոկուս-խմբային հանդիպում Գյումրիում գործող համապատասխան ընկերությունների հետ, որին հաջորդել են քննարկումներ և ամփոփում:

2024 թվականի մարտի 22
Ֆոկուս-խմբային քննարկումներ Երևանում գործող համապատասխան ընկերություններում, որին հաջորդել է այց Միասնական սոցիալական ծառայություններ:

Ճանաչողական այցը և ուսումնասիրության առաքելությունը հարուստ փորձառություն էր ծրագրի մասնակիցների համար. այն թույլ տվեց նրանց անմիջականորեն շփվել Հայաստանի մասնագիտական կրթության լանդշաֆտը ձևավորող մարդկանց և հաստատությունների հետ:
Այս մեկշաբաթյա միջոցառումը պարզապես հանդիպումների և այցելությունների շարք չէր. դա գաղափարների, փորձառությունների և ձգտումների միասնություն էր: Գործընկերները հնարավորություն ունեցան խորանալ առկա հարցերի մեջ, պարզել բացերը և փնտրել հայաստանյան համատեքստին հարմար նորարարական լուծումներ:
Ճանաչողական այցը Հայաստան մեծ հաջողություն էր. այն հագեցած էր աշխույժ քննարկումներով, նոր կապերով և բոլորի կողմից ստանձնած պարտավորություններով: Այս այցի ժամանակ ձևավորված պատկերացումներն ու համագործակցային ոգին ամուր հիմք են IMPROVET_AM նախագծի հաջորդ փուլերի համար:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Գյումրու պետական բժշկական քոլեջի այցը ՍԵՊՖԱ

Հաջողության ճանապարհին

2024 թվականի փետրվարի 6-ին Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնը հյուրընկալեց Գյումրու պետական բժշկական քոլեջի «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության ուսանողներին և դասախոսական կազմին:
Ուսանողները մեծ ոգևորությամբ և մեծ ակնկալիքներով մեկնեցին Երևան:
Ուսումնական այցի հիմնական նպատակն էր ապահովել երկու քոլեջների ուսանողների և դասախոսների համագործակցությունը, խթանել նոր գիտելիքների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը:

Ուսանողներին ուղեկցում էին Գյումրու պետական բժշկական քոլեջի տնօրեն Մ. Մարտիրոսյանը, օտար լեզվի դասախոս Ֆ. Մարտիրոսյանը, Կարիերայի պատասխանատու Կ.Հակոբյանը և «Ատամնատեխնիկական գործ» մասնագիտության դասախոս և պատասխանատու Ա. Եղիազարյանը:

Հանդիպումը անցավ ջերմ մթնոլորտում: Անցկացվեց գործնական դաս «Լրիվ շարժական թիթեղային պրոթեզ» մոդուլի «Ատամնաշարվածք» թեմայով: Դասի ընթացքում տեղի ունեցավ ուսանողների շփում, փորձի փոխանակում, իսկ ընդմիջման ժամանակ՝ նաև հյուրասիրություն:

Ուսանողներն իրենց գիտելիքներն ավելի ամրապնդեցին և իրենց հետ տարան այն նոր գիտելիքներն ու հմտությունները, որոնք կիրառվեցին դասի ընթացքում:

Դասը վարեցին Էրիկ Սարգսյանը, Արման Եղիազարյանը:

Ողջ կազմակերպչական աշխատանքը իրականացրեց քոլեջի տնօրինությունը Ատամնատեխնիկական գործ մասնագիտության դասախոս պատասխանատու Լ. Պապյանի հետ համատեղ:

Ուսումնական այցը շատ կարևոր դեր խաղաց երկու քոլեջների կապը ավելի ամրապնդելու գործում: Ուսանողները գոհ էին իրենց ընձեռված հնարավորությունից:

Նշենք նաև, որ Գյումրու պետական բժշկական քոլեջը և Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոնը համագործակցում են Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:

IMPROVET ARMENIA
CAPACITY BUILDING

Apro Formazione-ում փորձի փոխանցման ժամանակն է

Իտալիայի Ալբա քաղաքում հինգ հյուրեր մասնակցեցին մեկշաբաթյա դասընթացի, ինչպես նաև փորձի փոխանակման հանդիպումների՝ նվիրված սոցիալ-բժշկական ոլորտի միջազգային ծրագրերին, մասնագիտական ուղղորդմանը և կրթությանը:

Հայաստանից հյուրերի թվում էին Erasmus+ ծրագրի IMPROVET-AM նախագծի գործընկերներ Ֆրանս-հայկական մասնագիտական ուսումնական կենտրոն հիմնադրամի տնօրեն Գոհար Գրիգորյանը և Գյումրու պետական բժշկական քոլեջի տնօրեն Մարինա Մարտիրոսյանը:

Միացել էին նաև Erasmus+ ծրագրի V2V-AL նախագծի գործընկերներ Ալբանիայից, ինչը ավելի շեշտադրել էր փորձի փոխանակման միջազգային նոտան: Ալբայում անցկացվող հնգօրյա ծրագրին միացել էին Shkolla Hoteleriturizem հաստատության 3 դասավանդող:

Մասնակիցների համար արդյունավետ և ուսուցողական էր իտալացի գործընկերներ Istituto Professionale Cillario Ferrero ALBA, ASL CN2, Cooperativa Progetto Emmaus, Piccola Casa del Cottolengo և Rond dei Talenti կազմակերպությունների և Ալբայից միացած պատվիրակության անդամների հետ հանդիպումներն ու վերջիններիս գործունեության հետ ծանոթանալը:

Մայիսի 15-16-ը հյուրընկալվող մասնագետները ծանոթացան ASL CN2 ընկերությանը, այցելեցին Միշել և Պետրո Ֆերրերոյի հիվանդանոցը Վերդունո քաղաքում և տեղեկացան Ալբայում առկա հիվանդի խնամքի դասընթացի մասին:

Գ.Գրիգորյանը և Մ.Մարտիրոսյանը հանդիպեցին Presidio հաստատության տնօրեն բժիշկ Պաոլա Մալվազիոյին և ASL CN2-ի մասնագիտական խնամքի դասընթացի համակարգող բժիշկ Ջանկարլո Մերքուրիոյին, որոնք շրջայցի ժամանակ ներկայացրին սոցիալ-առողջապահական աշխատակցի պարտականությունները, նրա գործունեության շրջանակը և կապը առողջապահական ոլորտի այլ մասնագիտությունների հետ:

Այդ հանդիպումը հնարավորություն տվեց հասկանալ, որ դասընթացի մոդուլները մշակելուց անհրաժեշտ է ուղղորդվել կենսահոգեբանասոցիալական մոտեցմամբ, ուսումնասիրել դասավանդման նոր մեթոդները և նորարարությունները:

Վերդունոյի հիվանդանոցում պատվիրակությունը հնարավորություն ունեցավ տեսնելու հիվանդանոցի սարքավորումները, շտապօգնության բաժանմունքը, շարունակական առողջապահական խնամքի բաժնի կահավորվածությունը:

Հաջորդ օրը հյուրերին ներկայացվեց Ալբայի ուսումնական կենտրոնի խնամքի դասընթացի մասնագիտական լաբորատորիան, ցուցադրվեց դասավանդման սիմուլյացիոն մեթոդը և 2-րդ կուրսի ուսանողների հետազոտությունների համար նախատեսված լաբորատորիան:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ոչ Եվրամիությունը, ոչ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար:

Apro Formazione-ում փորձի փոխանցման ժամանակն է

ASL CN2 հաստատության և Apro Formazione-ի համագործակցությունը սոցիալ-առողջապահական աշխատակցի ուսուցման և մի շարք եվրոպական նախագծերում հմտությունների զարգացման հնարավորություն է նաև միջազգային գործընկերների համար:

Պատվիրակությունը հնարավորություն ունեցավ այցելել ոչ առևտրային կազմակերպություններ, որոնք զբաղվում են հատուկ խնամքի կարիք ունեցող անձանց խնդիրներով: Կազմակերպություններից մեկը՝ Cooperativa Progetto Emmaus-ը, բնակելի տուն է հաշմանդամություն, այդ թվում մտավոր խնդիրներ ունեցողների համար, իսկ մյուսը՝ Piccola Casa della Divina Provvidenza - Cottolengo, ծերերի և հաշմանդամների խնամքի տուն է:

Ուսուցողական շրջայցը կազմակերպել էր Apro Formazione-ն, այն օգնել էր հասկանալ առողջապահական և սոցիալ-առողջապահական մասնագիտությունների կապը, թվայնացման հնարավորությունները առողջապահական ոլորտում և դասավանդման նորարարական մեթոդոլոգիան:

Հյուրերը կարողացան այցելել Piera Cillario Ferrero բուհը և ծանոթանալ առողջապահական և սոցիալական խնամքի ոլորտին, Կունեո քաղաքում տեսնել «Տաղանդների քաղաք» կենտրոնը, որի առաքելությունն է բացահայտել երեխաների հետաքրքրությունները և մասնագիտական հակումները թվային և սեղանի խաղերի միջոցով:

Ի լրումն այս ամենի՝ Apro Formazione-ն կազմակերպել էր մի շարք հանդիպումներ հատուկ թեմաներով՝ ներառականություն, մասնագիտական ուղղորդում, մեծահասակ ուսանողների ներգրավում, մարքեթինգ և կապեր:

Project: 101128630 — IMPROVET-AM — ERASMUS-EDU-2023-CB-VET

Միացեք մեր գործընկերների թիմին

Ուրախ ենք ընդունել այն անհատներին և կազմակերպություններին, ովքեր կիսում են մեր տեսլականը՝ դառնալու IMPROVET-AM ծրագրի մաս: Միասին կարող ենք կատարել դրական փոփոխություններ և ստեղծել փայլուն ապագա Հայաստանի մասնագիտական կրթության համար:

Համաֆինանսավորվում է Եվրոպական միության կողմից

Ֆինանսավորվում է Եվրամիության կողմից: Արտահայտված տեսակետներն ու կարծիքները, այնուամենայնիվ, պատկանում են միայն հեղինակին (ներին) և պարտադիր չէ, որ արտացոլեն Եվրոպական միության կամ Եվրոպական կրթության և մշակույթի գործադիր գործակալության (EACEA) տեսակետները: Ո՛չ Եվրամիությունը, ո՛չ EACEA-ն չեն կարող պատասխանատվություն կրել դրանց համար: